ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N <<ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/104>

ք. Երևան «24» օգոստոսի 2020 թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Է. Կիրակոսյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԼԵՎ-ՇԻՆ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ն. Նաջարյանի որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի վարչական շենքի ջեռուցման համակարգի վերանորոգման աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ համաձայն հավելված 2-ի:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված **365 օրացուցային օր**): Եթե երաշխիքային

ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **18027840 (տասնութ միլիոն քսանյոթ հազար ութ հարյուր քառասուն)** ՀՀ դրամ, որից **3004640 (երեք միլիոն չորս հազար վեց հարյուր քառասուն)** ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը,

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,15 (զրո ամբողջ տասնհինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 15 (տասնհինգ) տոկոսի չափով:

Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է __17__ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Սույն պայմանագրով նախատեսնված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում **Երևանի քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը:**

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու	**Կապալառու**
Երևանի քաղաքապետարան	«ԼԵՎ-ՇԻՆ» ՍՊԸ
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1	ՀՀ Գեղարքունիքի մարզ,
Կենտրոնական գանձապետարան	գ. Լանջաղբյուր, Թումանյան 1/1
Հ/Հ 900032000136	<<ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ Բանկ>> ՓԲԸ
ՀՎՀՀ 02593108	Հ/Հ 220083335319000
	ՀՎՀՀ 08421559
Է. Կիրակոսյան ----------	Ն. Նաջարյան ----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված թիվ 1
«24» օգոստոսի 2020 թ. կնքված
կնքված աշխատանքների կատարման
թիվ << ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/104>> գնման պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

«ԵՐԵՎԱՆԻ ՆՈՐ ՆՈՐՔ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ՋԵՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ»

NN		Աշխատանքների անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի ընդհանուր արժեքը	Ընդհանուր արժեքը
					հազ. դրամ	հազ. դրամ
1	2	3	4	5	6	7
		Ջեռուցում				
		Հողային աշխատանքներ				
1	E1-1552	IV կարգի գրունտի մշակում էքսկավատորով, կողլիցքով /խրամուղում/	մ3	83.76	1.10	92.14
2	E1-1593	IV կարգի գրունտի մշակում էքսկավատորով, ինքնաթափ մեքենաների վրա բարձելով /խրամուղում/	մ3	45.00	1.20	54.00
3	E1-961	III կարգի գրունտի մշակում ձեռքով /խրամուղում/	մ3	4.74	1.00	4.74
4	C310-13 տ.մ.կ 29	Ավելորդ բնահողի տեղափոխում մինչև 13 կմ	տ	81.0	1.00	81.00
		Ընդամենը				231.88
		Տոկոսը ամբողջի համեմատ				1.54 %
		Վարչական շենք				
		Քանդման / ապամոնտաժման աշխատանքներ				
1	P17-140	Թուջե «M140-AO» տիպի մարտկոցների ապամոնտաժում, մինչև 80կգ քաշով	մ-ng	130	0.80	104.00
2	P17-140	Թուջե «M140-AO» տիպի մարտկոցների ապամոնտաժում, մինչև 160կգ քաշով	մ-ng	22	1.20	26.40

3	P17-64	Պողպատե խողովակների ապամոնտաժում Φ15-40մմ տրամագծի	գմ	812.0	0.35	284.20
4	P17-66	Պողպատե խողովակների ապամոնտաժում Φ57x3մմ տրամագծի	գմ	110.0	0.50	55.00
5	23-77	Ապամոնտաժված մարտկոցների, խողովակների դուրս բերում շենքից	տ	14.2	5.00	71.00
6	C310-13 տ.մ.կ 29	Նույնի բարձում եւ տեղափոխում պահեստ մինչև 13կմ	տ	14.2	5.00	71.00
7	E46-51	Անցքերի բացում միջհարկային ծածկերում d=40մմ	հատ	10	1.00	10.00
8	E46-109	Արտաքին դռների մոտ գրանիտե հատակների քանդում	մ2	2.00	3.00	6.00
9	E46-119	Տեմնտ-ավազային հարթեցնող շերտի քանդում	մ2	2.00	3.00	6.00
		Ընդամենը				633.60
		Տոկոսը ամբողջի համեմատ				4.22 %
		Կառուցողական աշխատանքներ				
1	E18-112	Ջեռուցման ալյումինե մարտկոցների տեղադրում	էքմ	438.5	0.60	263.10
2	շուկա	Ջեռուցման ալյումինե մարտկոցների արժեքը H=500մմ	սեկ-ցիա	1827	4.00	7308.00
3	շուկա	Մարտկոցի աքսեսուարներ	հատ	165	1.30	214.50
4	շուկա	Մարտկոցի կախիչ	հատ	330	0.50	165.00
5	E18-229	Մարտկոցի ջերմակարգավորիչ փականներ Φ15մմ	հատ	165	7.00	1155.00
6	E18-229	Մարտկոցի կարգավորիչ փականներ Φ15մմ	հատ	165	3.00	495.00
7	E18-229	Մարտկոցի օդահեռացման փականներ Φ15մմ /ավտոմատ/	հատ	165	2.20	363.00
8	E16-266	Խողովակաշարի անցկացում պոլիպրոպիլենային խողովակներից ալյումինե շերտով d=50մմ, Φ63x7մմ	գմ	110.00	4.70	517.00
9	E16-265	Խողովակաշարի անցկացում պոլիպրոպիլենային խողովակներից ալյումինե շերտով d=40մմ, Φ50x5.5մմ	գմ	80.00	3.50	280.00

10	E16-264	Խողովակաշարի անցկացում պոլիպրոպիլենային խողովակներից ալյումինե շերտով d=32մմ, Φ40x5.0մմ	գմ	26.00	2.50	65.00
11	E16-263	Խողովակաշարի անցկացում պոլիպրոպիլենային խողովակներից ալյումինե շերտով d=25մմ, Φ32x4.0մմ	գմ	438.00	1.30	569.40
12	E16-262	Խողովակաշարի անցկացում պոլիպրոպիլենային խողովակներից ալյումինե շերտով d=20մմ, Φ25x3.25մմ	գմ	134.00	0.90	120.60
13	E16-261	Խողովակաշարի անցկացում պոլիպրոպիլենային խողովակներից ալյումինե շերտով d=20մմ, Φ20x3.0մմ	գմ	258.00	0.65	167.70
14	12-811-1	Պոլիպրոպիլենե փական dպ=20մմ	հատ	8	1.00	8.00
15	12-811-1	Պոլիպրոպիլենե փական dպ=25մմ	հատ	26	1.50	39.00
16	E18-229	Դատարկման պոլիպրոպիլենե փականներ dպ=20մմ	հատ	34	1.00	34.00
17	շուկա	Խողովակների ջերմամեկուսացում արտաքին դռների անցումներում ռետինե մեկուսիչով	գմ	12.0	0.70	8.40
18	շուկա	Ամրակներ խողովակների ամրացման համար	հատ	2600	0.08	208.00
19	շուկա	Պոլիպրոպիլենային ձեւավոր մասեր անկյունակ Φ63x7.90	հատ	22	1.00	22.00
20	շուկա	Պոլիպրոպիլենային ձեւավոր մասեր անկյունակ Φ25x3.25 90	հատ	4	0.06	0.24
21	շուկա	Պոլիպրոպիլենային ձեւավոր մասեր անկյունակ Φ32x4.0 90	հատ	3	0.09	0.27
22	շուկա	Պոլիպրոպիլենային ձեւավոր մասեր անկյունակ Φ50x5.5 90	հատ	4	1.00	4.00
23	շուկա	Պոլիպրոպիլենային ձեւավոր մասեր անկյունակ Φ40x5.0 90	հատ	2	1.00	2.00
24	շուկա	Պոլիպրոպիլենային ձեւավոր մասեր անցում Φ63x7.0 - Φ50x5.5	հատ	4	1.00	4.00
25	շուկա	Պոլիպրոպիլենային ձեւավոր մասեր անցում Φ50x5.5 - Φ40x5.0	հատ	4	1.00	4.00
26	շուկա	Պոլիպրոպիլենային ձեւավոր մասեր եռաբաշխիչ Φ63x25x63	հատ	8	1.00	8.00
27	շուկա	Պոլիպրոպիլենային ձեւավոր մասեր եռաբաշխիչ Φ50x32x50	հատ	22	1.00	22.00
28	շուկա	Պոլիպրոպիլենային ձեւավոր մասեր եռաբաշխիչ Φ25x20x25	հատ	44	0.20	8.80
29	շուկա	Պոլիպրոպիլենային ձեւավոր մասեր եռաբաշխիչ Φ32x20x32	հատ	288	0.25	72.00
30	շուկա	Պոլիպրոպիլենային ձեւավոր մասեր մարտկոցների մոտ	հատ	660	0.05	33.00
31	E16-220	Համակարգի հիդրավլիկ փորձարկում	գմ	1046.0	0.10	104.60
		Ընդամենը				12265.61

		Տոկոսը ամբողջի համեմատ				81.64 %
		Զագսի մասնաշենք				
		Քանդման / ապամոնտաժման աշխատանքներ				
1	Р17-64	Պողպատե խողովակների ապամոնտաժում Φ15-57մմ տրամագծի	գմ	80.0	0.25	20.00
2	Р17-140	Պողպատե կոնվեկտորների ապամոնտաժում	հատ	6	4.00	24.00
3	23-77	Ապամոնտաժված կոնվեկտորների, խողովակների դուրս բերում շենքից	տ	0.2	5.00	1.00
4	С310-13 տ.մ.կ 29	Նույնի բարձում եւ տեղափոխում պահեստ մինչև 13կմ	տ	0.2	10.00	2.00
		Ընդամենը				47.00
		Տոկոսը ամբողջի համեմատ				0.31 %
		Կառուցողական աշխատանքներ				
1	Е18-112	Զեռուցման ալյումինե մարտկոցների տեղադրում	էջմ	18.0	0.60	10.80
2	շուկա	Զեռուցման ալյումինե մարտկոցների արժեքը Н=500մմ	սեկ-ցիա	75	4.00	300.00
3	Е16-266	Խողովակաշարի անցկացում պոլիպրոպիլենային խողովակներից ալյումինե շերտով d=50մմ, Φ63x7մմ	գմ	47.00	4.70	220.90
4	Е16-265	Խողովակաշարի անցկացում պոլիպրոպիլենային խողովակներից ալյումինե շերտով d=40մմ, Φ50x5.5մմ	գմ	25.00	3.50	87.50
5	Е16-261	Խողովակաշարի անցկացում պոլիպրոպիլենային խողովակներից ալյումինե շերտով d=20մմ, Φ20x3.0մմ	գմ	15.00	0.65	9.75
6	Е18-229	Մարտկոցի ջերմակարգավորիչ փականներ dպ=15մմ (Φ20մմ)	հատ	7	7.00	49.00
7	Е18-229	Մարտկոցի կարգավորիչ փականներ dպ=15մմ (Φ20մմ)	հատ	7	3.00	21.00
8	Е18-229	Մարտկոցի օդահեռացման փականներ Φ15մմ /ավտոմատ/	հատ	7	2.20	15.40
9	շուկա	Մարտկոցի աքսեսուարներ	հատ	7	1.30	9.10
10	շուկա	Մարտկոցի կախիչ	հատ	14	0.60	8.40
11	շուկա	Պոլիպրոպիլենային ձեւավոր մասեր անկյունակ Φ63x7 90	հատ	12	1.00	12.00
12	շուկա	Պոլիպրոպիլենային ձեւավոր մասեր անկյունակ Φ50x5.5 90՝	հատ	8	1.00	8.00
13	շուկա	Պոլիպրոպիլենային ձեւավոր մասեր անցում Φ63x7.0 - Φ50x5.5	հատ	2	1.00	2.00

14	շուկա	Պոլիպրոպիլենային ձեւավոր մասեր եռաբաշխիչ Φ63x25x63	հատ	12	1.00	12.00
15	շուկա	Պոլիպրոպիլենային ձեւավոր մասեր եռաբաշխիչ Φ50x20x50	հատ	2	1.00	2.00
16	շուկա	Պոլիպրոպիլենային ձեւավոր մասեր մարտկոցների մոտ	հատ	56	0.09	5.04
17	շուկա	Ամրակներ խողովակների ամրացման համար	հատ	120	0.09	10.80
		Ընդամենը				783.69
		Տոկոսը ամբողջի համեմատ				5.22 %
		Մշակույթի կենտրոն				
		Քանդման / ապամոնտաժման աշխատանքներ				
1	Р17-64	Պողպատե խողովակների ապամոնտաժում Φ32-40մմ տրամագծի	գմ	22.0	0.25	5.50
2	23-77	Ապամոնտաժված կոնվեկտորների, խողովակների դուրս բերում շենքից	տ	0.06	40.00	2.40
3	С310-13 տ.մ.կ 29	Նույնի բարձում եւ տեղափոխում պահեստ մինչև 13կմ	տ	0.06	40.00	2.40
		Ընդամենը				10.30
		Տոկոսը ամբողջի համեմատ				0.07 %
		Կառուցողական աշխատանքներ				
1	Е16-265	Խողովակաշարի անցկացում պոլիպրոպիլենային խողովակներից ալյումինե շերտով d=40մմ, Φ50x5.5մմ	գմ	10.00	3.50	35.00
2	Е16-264	Խողովակաշարի անցկացում պոլիպրոպիլենային խողովակներից ալյումինե շերտով d=32մմ, Φ40x5.0մմ	գմ	12.00	2.50	30.00
3	Е22-431 կիր.	Խցափակում Φ40x5	տեղ	2	5.00	10.00
4	Е16-210	Միացում առկա պոլիպրոպիլենե խողովակներին Φ40x5.0մմ	տեղ	2	5.00	10.00
5	Е16-209	Միացում առկա պոլիպրոպիլենե խողովակներին Φ32x4.0մմ	տեղ	2	4.00	8.00
6	Е16-207	Միացում առկա պոլիպրոպիլենե խողովակներին Φ20x3.0մմ	տեղ	2	4.00	8.00

7	շուկա	Ձևավոր մասեր	հատ	18	1.00	18.00
8	շուկա	Ամրակներ խողովակների ամրացման համար	հատ	44	0.09	3.96
		Ընդամենը				122.96
		Տոկոսը ամբողջի համեմատ				0.82 %
		Ջերմային հանգույց				
		Քանդման / ապամոնտաժման աշխատանքներ				
1	P17-66	Պողպատե խողովակների ապամոնտաժում Φ57-100մմ տրամագծի	գմ	38.0	0.20	7.60
2	P17-140	Պողպատե կոլեկտորների ապամոնտաժում d=150 L=1.5	հատ	2	0.50	1.00
3	23-77	Ապամոնտաժված խողովակների դուրս բերում շենքից	տ	0.42	2.00	0.84
4	C310-13 տ.մ.կ 29	Նույնի բարձում եւ տեղափոխում պահեստ մինչև 13կմ	տ	0.42	1.00	0.42
		Ընդամենը				9.86
		Տոկոսը ամբողջի համեմատ				0.07 %
		Կառուցողական աշխատանքներ				
1	E18-180	Պողպատե սանրախողովակ չորս կարճախողովակներով /ատյաբ/ d=150մմ L=1.5մ	հատ	2	15.00	30.00
2	E16-69	Պողպատե խողովակ Φ108x3.0մմ	գմ	25.0	4.50	112.50
3	E18-187	Խողովակային զտիչ d=100մմ	հատ	2	110.00	220.00
4	12-811-1	Թիթեռնիկաձև փական d=100մմ	հատ	4	32.00	128.00
5	E16-266	Խողովակաշարի անցկացում պոլիպրոպիլենային խողովակներից ալյումինե շերտով d=50մմ, Φ63x7մմ	գմ	45.00	4.70	211.50
6	E16-262	Խողովակաշարի անցկացում պոլիպրոպիլենային խողովակներից ալյումինե շերտով d=20մմ, Φ25x3.25մմ	գմ	16.00	0.90	14.40
7	12-811-1	Պոլիպրոպիլենե փական d=50 (Φ63)	հատ	6	6.00	36.00
8	E18-229	Դատարկման պոլիպրոպիլենե փականներ d=20 (Φ25)	հատ	6	1.00	6.00
9	12-811-1	Արույրե դատարկման փական d=20	հատ	2	2.20	4.40
10	E22-389	Միացում առկա խողովակին Φ108x3.0	տեղ	2	8.00	16.00
11	E15-614	Մետաղական խողովակների երկշերտ յուղաներկում	մ2	13.00	1.50	19.50
		Ընդամենը				798.30
		Տոկոսը ամբողջի համեմատ				5.31 %
		Կաթսայատուն				
1	P17-140	Առկա գազայրիչի ապամոնտաժում	կետ	2	5.00	10.00
2	շուկա	Կաթսաների թուջե սեկցիաների մաքրում նստվածքներից	կաթսա	2	30.00	60.00
3	E19-9	Ապամոնտաժված գազայրիչների մոնտաժում	կետ	2	5.00	10.00

4	P17-140	Կեղտազտիչի ապամոնտաժում D=370 H=400	հատ	1	5.00	5.00
5	E18-187	Խողովակային զտիչ մոնտաժով d=100	հատ	1	35.00	35.00
		Ընդամենը				120.00
		Տոկոսը ամբողջի համեմատ				0.80 %
		Ընդամենը				15023.20
		ԱԱՀ, 20%				3004.64
		Ընդամենը				18027.84

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900032000136
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան ----------

Կ.Տ

Կապալառու
««ԼԵՎ-ՇԻՆ» ՍՊԸ
ՀՀ Գեղարքունիքի մարզ,
գ. Լանջաղբյուր, Թումանյան 1/1
<<ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ Բանկ>> ՓԲԸ
Հ/Հ 220083335319000
ՀՎՀՀ 08421559

Ն. Նաջարյան ----------

Կ.Տ

Հավելված թիվ 2
«24» օգոստոսի 2020 թ. կնքված
կնքված աշխատանքների կատարման
թիվ << ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/104>> գնման պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

« Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի վարչական շենքի ջեռուցման համակարգի վերանորոգման» **ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի վարչական շենքի ջեռուցման համակարգի վերանորոգման աշխատանքներ	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	30.10.2020
ԸՆԴԱՄԵՆԸ		Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	30.10.2020

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900032000136
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ.

Կապալառու
««ԼԵՎ-ՇԻՆ» ՍՊԸ
ՀՀ Գեղարքունիքի մարզ,
գ. Լանջաղբյուր, Թումանյան 1/1
<<ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ Բանկ>> ՓԲԸ
Հ/Հ 220083335319000
ՀՎՀՀ 08421559

Ն. Նաջարյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 3
«29» օգոստոսի 2020 թ. կնքված
կնքված աշխատանքների կատարման
թիվ << ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/104>> գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
	45231143		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
		Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի վարչական շենքի ջեռուցման համակարգի վերանորոգման աշխատանքներ	-	-	-	-	-	-	-	**18 027 840**	**18 027 840**	**18 027 840**	**18 027 840**	**18 027 840**	**18 027 840**

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900032000136
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան ----------
(ստորագրություն)

Կ.Տ

Կապալառու
««ԼԵՎ-ՇԻՆ» ՍՊԸ
ՀՀ Գեղարքունիքի մարզ,
գ. Լանջաղբյուր, Թումանյան 1/1
<<ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ Բանկ>> ՓԲԸ
Հ/Հ 220083335319000
ՀՎՀՀ 08421559

Ն. Նաջարյան ----------
(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված թիվ 4
« 24 » օգոստոսի 2020 թ. կնքված
կնքված աշխատանքների կատարման
թիվ << ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/104>> գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« 24 » օգոստոսի 2020 թ. կնքված
կնքված աշխատանքների կատարման
թիվ << ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/104>> գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____ -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ACBA-CREDIT AGRICOLE BANK

21 օգոստոսի 2020թ.
ք. Երևան

Թիվ 01-1677

ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ
ԹԻՎ 20 08 40 456104/4

(պայմանագրի ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Բենեֆիցիար) և «ԼԵՎ-ՇԻՆ» ՍՊԸ (այսուհետ՝ Պրինցիպալ) միջև կնքվելիք թիվ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/104» պայմանագրից (այսուհետ՝ Պայմանագիր) բխող Պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) պատշաճ կատարման ապահովում:

2. Երաշխիքով «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին անվերապահորեն վճարել 1.802.784 (մեկ միլիոն ութ հարյուր երկու հազար յոթ հարյուր ութսունչորս) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար) Պահանջը ստանալուց հետո 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի կողմից նշված հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Սույն Երաշխիքն ուժի մեջ է մտնում տրման օրվանից և գործում է մինչև Պրինցիպալի կողմից ստանձնված պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ, սակայն ոչ ուշ, քան 30 նոյեմբերի 2021թ.-ը ներառյալ:

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

1) N «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/104» պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) Բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը,

3) սույն Երաշխիքը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերն ստանալուց հետո առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե.

1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին,

2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

10. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վաճառքների խթանման և ռեգիոնալ կառավարման
գծով գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ Ն. Նազարյան

Կատարող
Արփի Գաբրիելյան
Հեռ. 010 31-88-88 (ներքին 8386)

ACBA-CREDIT AGRICOLE BAN

21 օգոստոսի 2020թ.
ք. Երևան

Թիվ 01-

ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ
ԹԻՎ 20 08 40 456104/3

(որակավորման ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է Երևանի քաղաքապետարան (այսուհետ՝ Բենեֆիցիար) կողմից թիվ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/104» ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «ԼԵՎ-ՇԻՆ» ՍՊԸ (այսուհետ՝ Պրինցիպալ) կողմից կնքվելիք թիվ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/104» պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին վճարել 18 027 8[illegible] (տասնութ միլիոն քսանյոթ հազար ութ հարյուր քառասուն) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար) Պահանջը ստանալուց 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի կողմից նշված հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է տրման օրվանից մինչև Բենեֆիցիարի կողմից պայմանագրի կատարման արդյունքն ամբողջական ընդունելու օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ, սակայն ոչ ուշ, քան 30 նոյեմբերի 2020թ.-ը ներառյալ:

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

1) N «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/104» ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները,

2) Բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը,

3) սույն Երաշխիքը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերն ստանալուց հետո առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե.

1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին,

2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

10. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վաճառքների խթանման և ռեգիոնալ կառավարման
գծով գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ Ն. Նազարյան

Կատարող
Արփի Գաբրիելյան
Հեռ. 010 31-88-88 (ներքին 8386)